ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հուլիսի 18-ից 22-ը Ռուսաստանի Դաշնություն (ք.Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Զարեհ Սինանյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, հուլիսի 18-ից 22-ը

4. Հրավիրող կողմը՝

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ համապատասխան որոշման հիման վրա

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Պայմանավորված Ռուսաստանում հայկական սփյուռքի մեծությամբ, աշխարհագրական տարածվածությամբ ու բարդությամբ՝ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի առաջին աշխատանքային այցը եղավ դեպի Ռուսաստանի Դաշնություն, մասնավորապես՝ Մոսկվա: Այցի նպատակն էր՝ տեղում ծանոթանալ համայնքի կյանքին, խնդիրներին, մարտահրավերներին, հանդիպել տարբեր շրջանակների հետ՝ համայնքային կառույցներ, կազմակերպություններ, երիտասարդական միավորումներ, գործարարներ, մշակույթի, կրթության, հոգևոր ոլորտների ներկայացուցիչներ, անհատներ: Այցի առանցքում էին փոխճանաչությունը, խնդիրների համատեղ քննարկումը և համագործակցության ուղիների նախանշումը:

6. Քննարկված թեմաները

- Սփյուռքի, մասնավորապես՝ Մոսկվայի հայ համայնքի ներգրավումը հայրենիքի կյանքին, գործընկերային հարաբերությունների հաստատում
- Համայնքային կառույցների, անհատների հետ սերտ համագործակցության հեռանկարները
- Հայրենադարձության, հատկապես մասնագիտական հայրենադարձության հնարավորությունները
- Հայաստանի ներդրումային գրավչությունը և սփյուռքահայերի կողմից ներդրումների խրախուսումը
- Օրենսդրական խոչընդոտների վերացումը, ընթացակարգերի դյուրինացումը
- Համայնքներում հայ ինքնության պահպանման, կրթական գործի կազմակերպման գործընթացում առկա դժվարությունները, Հայաստան պետության կողմից աջակցության հնարավորությունները
- Համահակական երիտասարդական, մասնագիտական հարթակների ձևավորումը, համահայկական խորհրդի ստեղծումը
- Ռուսաստանի հայ համայնքի կրթված երիտասարդներերի ներգրավումը Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի աշխատանքներում
- Համահայկական հեռուստատեսության գաղափարը
- Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և Ռուսաստանի ազգությունների գործերի դաշնային գործակալության հետագա համագործակցությունը, հայաստանաբնակ, Ռուսաստանի հայ և այլազգի երիտասարդների մասնակցությամբ հարթակների ստեղծումը
- Հայոց լեզվի ուսուցման հարցում առկա խոչընդոտների վերացումը, հայկական մասնավոր դպրոցների հիմնման անհրաժեշտությունը
- Սփյուռքի քարտեզագրում, ներուժի համախմբում և տեղեկատվության հասանելիությունը
- Սփյուռք-սփյուռք կապերի ամրապնդում, միջհամայնքային համագործակցության խրախուսումն ու նախաձեռնումը

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Օր 1.

Հանդպում 1. Մոսկվա աշխատանքային այցի առաջին օրը Զարեհ Սինանյանը հանդիպեց «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության խորհրդի անդամների հետ: Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը հանդես եկավ ելույթով, որտեղ կարևորեց միության և նրա մասնաճյուղերի հետ ակտիվ աշխատանքը, գործընկերային

հարաբերությունների հաստատումը և պետականության գաղափարի շուրջ համախմբումը: Բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում էին սփյուռքի կազմակերպմանն ու ներուժի համախմբմանը, եկեղեցի-համայնք կապի ամրապնդմանը, հայկական ինքնության և մշակույթի պահպանմանը, Հայաստանի կյանքին սփյուռքի ներգրավվածությանը: Հանդիպման ընթացքում քննարկումները ծավալվեցին հետևյալ հարցերի շուրջ.

1. Ստեղծել համահայկական խորհուրդ, որը կկարողանա ներկայացնել սփյուռքի գրեթե բոլոր շերտերը
2. Խորությամբ ուսումնասիրել սփյուռքը և հասկանալ առակ խնդիրները, ուղղել Հայաստանի և սփյուռքի ջանքերը այդ խնդիրների լուծմանը
3. Կազմակերպել ամենամյա համահայկական բիզնես ֆորում, որտեղ ներգրավված կլինեն սփյուռքի և Հայաստանի գործարար ոլորտի մեծաթիվ ներկայացուցիչներ և կխթանեն ներդրումների իրականացմանը, բիզնես կապերի զարգացմանը
4. Մշակել մեկ ազգային գաղափարախոսություն և համահայկական օրակարգ
5. Մեծ ուշադրություն դարձնել Հայաստանում սփյուռքից եկած կադրերի (ուսուցիչներ, երիտասարդ առաջնորդներ, սփյուռքագետներ) վերապատրաստմանը և փորձի փոխանակմանը

Հանդիպում 2. Զարեհ Սինանյանը հանդիպեց «Կիլիկիա» հայկական բիզնես ակումբի ներկայացուցիչների հետ: Իր ելույթում ներկայացրել է սփյուռքի հետ տարվող աշխատանքներում Հայաստանի որդեգրած քաղաքականությունը, ակնկալվող ծրագրերը, համահայկական նշանակություն ունեցող խնդիրները, ինչպես նաև Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի նոր գործելաոճը՝ ակնկալելով Ռուսաստանի հայկական կազմակերպությունների և հայ համայնքի ակտիվ մասնակցությունը:

Ակումբի մասնակիցները քննարկում ծավալեցին՝ նշելով.

1. Կշարունակեն Հայաստանում և Արցախում իրականացնել մի շարք ենթակառուցվածքային և ներդրումային ծրագրեր՝ բարձր տեխնոլոգիաների, էկոլոգիայի, զբոսաշրջության և գյուղատնտեսության ոլորտներում:
2. Երևանում ստեղծել «Կիլիկիա» վերնատուն սփյուռքահայ գործարարների Հայաստան բերելու համար
3. Նպաստել ակումբի վիրտուալ հարթակի զարգացմանը, որը ներբեռնելով՝ աշխարհի ցանկացած վայրում մարդիկ կարող են տեղեկություններ գրանցել իրենց բիզնեսի մասին, կապ հաստատել այլ գործարարների հետ՝ ըստ

ոլորտների, ազգային պատկանելիության ու գտնվելու վայրի: Այն կգործարկվի 2019 թվականի 2-րդ կիսամյակում:

Հանդիպում 3. Զարեհ Սինանյանը Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը հանդիպեց հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին համայնքային խնդիրները, կրթական ոլորտի խոչընդոտները, հայրենադարձության գործընթացը և այլն:

Օր 2.

Հանդիպում 1. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը ՌԴ-ում Հայաստանի դեսպանատանը հանդիպեց ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի անդամների հետ: Դարձյալ հանդես է եկել ելույթով: Քննարկվել են խորհրդում ներառված 15 տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությունները:

Հանդիպում 2. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը հանդիպեց «Լսարան» նախագծի հիմնադրի և նախաձեռնող խմբի անդամների հետ: Նրանք ներկայացրին կրթամշակութային «Լսարան» համաժողովը, որը այս տարի սեպտեմբերին արդեն 5-րդ անգամ է անցկացվելու, և հրավիրեցին Զարեհ Սինանյանին:

Հանդիպում 3. Զարեհ Սինանյանը հանդիպել է նաև «Ռուսաստանի հայերի միավորում» կազմակերպության խորհրդի անդամների հետ: Բարձրաձայնված թեմաները հիմնականում առնչվում էին.

1. Ուժեղ Հայաստանի ուժեղ սփյուռք թեզի տարածում
2. Ռուսաստանում հայկական մշակույթի պահպանում և տարածում
3. Հայերի շահերի պաշտպանություն և լիարժեք ինտեգրում
4. Գործուն, օպերատիվ մեխանիզմների ներդրում, որոնք թույլ կտան Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և համայնքային կազմակերպությունների միջև մշտական կապի հնարավորություն, ստեղծել կազմակերպությունների միջև համագործակցության հարթակ
5. Սփյուռքի երիտասարդներին, մասնավորապես՝ Ռուսաստանի հայ երիտասարդներին առաջարկել Հայաստանում հետաքրքիր և արդյունավետ կամավորական ծրագեր

6. Սփյուռքահայերի կողմից ներկայացվող ծրագրերի օնլայն միասնական հարթակի ստեղծում
7. Մասնագիտական ցանցերի ստեղծում և զարգացում
8. Հայաստանի պետական կառավարման համակարգում սփյուռքահայ երիտասարդների ներգրավում

Օր 3.

Հանդիպում 1. Աշխատանքային 3-րդ օրվա մեկնարկին Զարեհ Սինանյանը հանդիպեց «Դիալոգ» կազմակերպության ներկայացուցիչների և գործընկերների հետ: Հանդիպումը ծավալվեց հետևյալ կետերի շուրջ.

1. Ռուսաստանի հայ համայնքի և հանրային դիվանագիտության դերը երկու երկրների բարեկամական հարաբերությունների զարգացման գործում
2. Հայաստանի և Ռուսաստանի վերլուծական կենտրոնների միջև կապերի հաստատում
3. Սփյուռքի մասնակցությամբ միջազգային նորարար գիտաժողովների, քաղաքագիտական համաժողովների, հասարակական բանավեճերի կազմակերպում
4. Հայաստանի կառավարության տարբեր օղակների և հասարակական, մասնավոր կազմակերպությունների հետ միասին սփյուռքի ներգրավմամբ կրթական, ճանաչողական և մշակութային ծրագրերի կազմում
5. Ռուսաստանի հայ համայնքի՝ կառույցների ու կազմակերպությունների տվյալների բազայի ստեղծում, որին հասանելիություն կունենան տվյալ կազմակերպությունների ներկայացուցիչները
6. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կազմակերպմամբ հայանքներ հայերենի դասագրքերի պատշաճ և ժամանակին մատակարարում
7. Աջակցություն հայկական դպրոցներին

Հանդիպում 2. Զարեհ Սինանյանը հանդիպեց ռուսաստանաբնակ հայ արվեստագետների և մշակույթի գործիչների հետ, հանդես եկավ ելույթով: Բարձրաձայնվեցին հետևյալ խնդիրները.

1. Սփյուռքի և Հայաստանի արվեստագետների միջև համագործակցության խթանում
2. Հայերենը՝ որպես մայրենի լեզու դասավանդելու խոչընդոտի մեղմում
3. Սփյուռքահայ ուսուցիչների ավելի խորացված վերապատրաստում

4. Միջկառավարական համաձայնագրով Մոսկվայում երկու հայկական դպրոց ունենալու թույլտվություն կա, սակայն գործում է ընդամենը մեկը: Համայնքն ակնկալում է պետության աջակցությունը երկրորդ կրթօջախը բացելու հարցում:
5. Սփյուռքի թանգարանի ու համահայկական հեռուստատեսության գաղափարի քննարկում

Հանդիպում 3. Հանդիպում կայացավ Յարոսլավլի, Տվերի և մերձմոսկովյան քաղաքների հայ համայնքների ներկայացուցիչների հետ: Քննարկված հացերը հիմնականում հայապահպանությանը և հայրենադարձությանն էին վերաբերում:

Հանդիպում 4. Զարեհ Սինանյանը աշխատանքային այցի 3-րդ օրվա ավարտին հանդիպեց Մոսկվայի հայ երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հնչեցված հարցերը.

1. Ռուսաստանի հայկական սփյուռքի կազմակերպման գործընթացում որոշակի մեխանիզմների ներդրում
2. Հայաստանում որևէ նախաձեռնություն սկսելու ցանկություն ունեցող մարդկանց ճիշտ ուղղորդում
3. Աջակցություն հայեցի կրթություն տրամադրելու հարցում
4. Հայ ուսանողների համահայկական ֆորումի անցկացում Հայաստանում
5. Աշխատանքի հնարավորություններ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակում

Օր 4.

Հանդիպում 1. Զարեհ Սինանյանը հուլիսի 21-ին հանդիպեց ՀՅԴ Հայ Դատի մոսկովյան հանձնախմբի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են համագործակցության հետագա հեռանկարները:

Հանդիպում 2. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարն այցելել է Մոսկվայի հայկական եկեղեցական համալիր և հանդիպել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի առաջնորդանիստ եկեղեցու հոգևոր դասի, Նարեկացու անվան վարժարանի տնօրինության, ուսուցիչների, Հայորդյաց տան աշխատակազմի, Հայագիտական բաժնի և «Տապան» թանգարանի աշխատակիցների, «Նուռ» եկեղեցասեր երիտասարդության անդամների, թեմի մշակութային կառույցների ներկայացուցիչների, «Հայաստանյայց եկեղեցի» թերթի լրագրողների, գրադարանի տնօրինության և մի շարք հավատացյալների հետ: Բարձրաձայնվել են մշակութային և կրթական ոլորտներին

առնչվող բազմաթիվ հարցեր, որոնց մի մասն արտացոլվել են մյուս հանդիպումների նկարագրերում:

Օր 5.

Հանդիպում 1. Զարեհ Սինանյանի աշխատանքային այցի վերջին օրվա ընթացքում հանդիպել է Հայերի ասամբլեայի նախագահության անդամ Վահե Ենգիբարյանի հետ: Քննարկված հարցերն առավելապես առնչվել են գրասենյակի և կազմակերպության համագործակցությանը, կարևորվել է հայկական բրենդի տարածումը ոչ միայն Ռուսաստանում, այլև ամբողջ աշխարհում:

Հանդիպում 2. Հանդիպում է տեղի ունեցել Զարեհ Սինանյանի և Ռուսաստանի ազգությունների գործերի դաշնային գործակալության ղեկավարի տեղակալ Միխայիլ Միշինի հետ: Քննարկվել են մի շարք կարևոր հարցեր, այդ թվում.

1. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և գործակալության միջև համագործակցության հնարավորությունները
2. Հայաստանի, Ռուսաստանում բնակվող հայ և այլազգի երիտասարդների միջև համագործակցության և շփումների ակտիվացման հեռանկարները, տարբեր երիտասարդական ֆորումների կազմակերպման և երիտասարդների մասնակցության հարցը
3. Ռուսաստանում հայոց լեզվի ուսուցման խնդիրը, երկուստեք կարևորվեց այս հարցում առկա բոլոր խոչընդոտների վերացումը

Հանդիպում 3. Հանդիպում կայացավ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանի և ՌԴ ԱԳ նախարարի տեղակալ, պետքարտուղար Գրիգորի Կարասինի միջև: Հանդիպման ընթացքում քննարկված թեմաները.

1. Հայերը՝ որպես Ռուսաստանի բազմազգ պետության մի մաս
2. Հայերի ակտիվ ներգրավվածությունը Ռուսաստանի քաղաքական, մշակութային, հասարակական, տնտեսական ոլորտներում՝ պահպանելով իրենց ինքնությունը
3. Ռուսաստանի հայկական սփյուռքի հետ աշխատանքի ուղղությունները, շեշտադրումներն ու մոտեցումները

Հանդիպում 4. Հանդիպում տեղի ունեցավ նաև Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աբել Աղանբեկյանի հետ: Հարցերի շրջանակը ներառում էր կրթության և տնտեսության ոլորտները:

Հանդիպում 5. Զարեհ Սինանյանի վերջին հանդիպումը Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի ղեկավար Կարեն Մկրտչյանի հետ էր: Քննարկվել են համայնքի գործունեությանն ու խնդիրներին վերաբերող հարցեր:

Այսպիսով՝ ընդհանուր առմամբ Զարեհ Սինանյանը 5-օրյա այցի ընթացքում ունեցել է **17 հանդիպում**:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, որոնք հիմնականում վերաբերում են համագործակցության հետագա ընթացքին: Պայմանավորվածությունների ոլորտները մեծամասամբ կապված են համայնքային խնդիրների լուծման ուղղություններին, կրթության, հայապահպանության, հայրենադարձության, համահայկական տարաբնույթ հարթակների ստեղծմանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Քննարկված կետերում առկա բոլոր առաջարկությունները կդրվեն քննարկման և վերլուծության և կստանան համապատասխան ընթացք:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

26.07.2019